




Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

636.3

Մ-50

Պրոֆեսարներ բոլոր յերկրներէ, միացե՛ք

# ՎՈՉԽԱՐԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԿԱԶՄԵՑ

ԿՈՍՏԱՆԴԻՆ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

---

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Ի. Լ. ՂԱՐԱՓԱՂԻ ՊԵՏՀՐԱՏԻ № 10

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

1926 թ.



27.06.2013

24 SEP 2010

Պոլիստրենի բոլոր լեզուների միացե՛ք

636.3

15-50

այս

# ՎՈՉԽԱՐԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԿԱԶՄԵՑ

ԿՈՍՏԱՆԴԻՆ Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

1000

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Ի. Լ. ՂԱՄԱՆԻ ՊԵՏՏՐԱՏԻ № 10

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

1926 թ.



15981-57



Ներկա աշխատությունը կազմելիս աչքի առաջ ենք ունեցել պրոֆ. Պ. Ի. Կուլիշովի, Գ. Գ. Վիդենբերգի, պրոֆեսոր Ի. Ի. Կալուգինի և ուրիշների ձեռնարկները և հետևել նրանց տված խորհուրդներին:

Կ. Մ-յան

XXXXXXXXXX

## ՎՈՋԻԱՐԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ՏՎԱԾ ՈԳՈՒՏՆԵՐԸ

Վոջխարապահությունը մեզանում զարգացած էր շատ ու քիչ և այժմ էլ աշխատում են զարգացնել գլխավորապես լեռնային շրջաններում, վորտեղ կան ազատ արոտատեղեր: Վոջխարապահությունը մեծ ապագա ունի գյուղացու տնտեսության մեջ Լոռի-Փամբակի, Լենինականի, Աբարանի, Նոր-Բաղադետի, Ծաղկաձորի, Դիլիջանի, Զանգեզուրի և Ղարաբաղի շրջաններում, չեթե փոքր ինչ ուշադրություն դարձնենք նրանց կանոնավոր խնամքի և նրանից շահվելու վրա:

Վոջխարը գյուղացուն տալիս է կաթ, վորից մածոն, յուղ և պանիր են պատրաստում, նրա միսը, ճարպը-գմակը ծախվում է շուկայում կամ գործադրվում տնային պետքերի համար, մորթուց պատրաստում են մուշտակներ, գլխարկներ, ձեռնոցներ, կոշիկներ, բլրից՝ գործում են կարպետներ, գորգեր, մեզարներ, շալեր և գործարաններում հագուստեղնի ճոթեր, այնպես վոր վոջխարապահ գյուղացին շատ բաների կարիք չի զգում և նրա ընտանիքը ապահովված է ապրուստի կողմից: Մի եզ վոջխարը տալիս է կարող է գուտ արդյունք տալ տիրոջը 3—4 բուբլի և ավելի:

Բացի վերոհիշյալ մթերքները վոջխարի աղբը և փոշիացրած փոսկրտանքը ծառայում են ինչպես պարարտացուցիչ նյութ, իսկ նրա աղիքները գործադրում են չեթափշտական լարեր և չերշիկ (կալբաս) պատրաստելու համար:

Վոջխար պահելու մի ուրիշ առավելությունն էլ նրա մեջն է, վոր նա կերի մեջ խորություն չի գնում, նա

Խնդնավար Լեռնային Ղարաբաղի Լուսժողովմատի տպարան

Պատվեր № 818

Գրառ. 105

տիրած 1500



իր համար կեր է գտնում քարափնեքում, սարալանջերում, թփուտներում, շորաքյաթ հողերում. սոված ժամանակը վոչ միայն դարման կամ ծղոտ է ուտում, այլ և ամեն տեսակ խոտեղեն, բանջարեղեն, մինչև անգամ կտրտված ծառի ճղները կեղև:

Մեր տեղական պահանջը գլխավորապես միայն, բուրգը և կաթը լինելով վոչխար պահելուց աչքի առաջ պիտի ունենանք, թե ինչ ցեղի վոչխարն ավելի համապատասխան է տեղական կլիմայական և այլ պայմաններին և վոչ ցեղն ավելի ձեռնտու չե պահել՝ մսացու, կաթնատու, լավ ագնիվ բուրգ տվող մերինոս տեսակը, թե կարակուլին՝ ագն է Բուխարային, վորի գառան մորթին մեծ պահանջ ունի Ռուսաստանում և արտասահմանում և նրա արժեքը մի քանի անգամ բարձր է, քան սովորական կովկասի տեղական վոչխարներին:

Անդրկովկասում քանի վոր վոչխարի միսն ազգաբնակչության համար ավելի գործածություն մեջ է, քան տավարինը, նրա բուրգը, կաշին մի անհրաժեշտ պահանջ է տեղական պետքերի համար, պետք է ուշ դարձնել, թե ընտիր մսացու, դմակավոր ցեղի վրա և միաժամանակ աչքաթող չանել մերինոս և բուխարական վոչխարներ պահելը, վորոնք, ինչպես փորձերը ցույց են տվել, կարող են համակերպվել մեր կլիմայական պայմաններին և արտահանության նյութ դառնալ նրանց բուրգը և մորթին: Հողփողկոմատը, կոոպերատիվ ընկերությունները, արտերները թե աչդ և թե անգլիական լավ միս տվող ագնվացեղ վոչխարներից խոյեր (դոչ), մաքիներ (եգ վոչխար) ձեռք բերելով և բեղմնավորման կայարաններ բանալով, մեծ աջակցություն ցույց տված կլինեն տեղական վոչխարապահությունը պարապողներին:

## 1. ԽՈՅԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԵԳԵՐԻ ՇԵՏ ՁԳԵԼԸ

Վոչխարապահության մեջ մեծ նշանակություն ունի խոյերի (դոչերի) և մաքիների (եգերի) ընտրությունը, քա-

նի վոր նրանք ժառանգաբար թողնում են իրենց լավ թե վատ հատկությունները նոր սերնդին:

Մեզանում շատ քիչ են ուշադրություն դարձնում խոյերի հասակի, նրա բեղմնավորման ընդունակության և ժամանակի վրա: Բավական է, վոր հոտի (նախիրի) մեջ մի քանի դոչեր լինեն, ջահել թե ծեր և վոչխարատերը գոհ է: Շատ անգամ եգերը բեղմնավորվում են 6—8 ամսական վորձերից կամ վորձերն են անչափահաս ջահել եգերի հետ խառնվում: Այդպիսի հայրերից և մայրերից, ի հարկե, չի կարող լավ սերունդ առաջանալ և ցեղը հետգհետե կը կորցնի իր ընտիր հատկությունները:

Մսացու ցեղի դոչերի եգերի հետ ձգելը պիտի լինի վոչ առաջ, քան մեկ ու կես տարի հասակ ունենալուց կամ ավելի լավ չերկու տարեկանում, մերինոսների 2—2 և կես տարիքում:

Բեղմնավորելու համար պահած դոչերին չպետք է շահագործել նրանց ուժերը սպառել շատ եգերի հետ ձգելով, վորից նրանք սաստիկ նիհարանում են և շատ եգեր մնում առանց բեղմնավորվելու: Ղոչերին կարելի չե թողնել մինչև 4—5 տարեկան հասակը, թեև կան աջակախները, վոր պետքական են մինչև 8 տարեկանը:

Մի լավ զարգացած դոչին կարելի չե տալ տարեկան 35—40 եգեր, հոտի մեջ առհասարակ պահում են ամեն 50—60 եգի համար մի լավ զարգացած դոչ: Ագնվացեղ դոչերին չպետք է թողնել եգերի հետ խառնվելու որական չերեքից ավելի:

Եգ վոչխարների հյուսթյունը մինչև ծնունդը տեվում է 5 ամիս կամ 150—155 որ:

## 2. ԵԳԵՐԻ ԶՈՒԳԱՎՈՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԾՆՈՒՆԴԸ

Մաքիներին (եգերին) զուգավորելու, դոչի հետ ձգելու ժամանակը կախված է, թե վոր ամսին են ցանկանում զառներ ունենալ:



Գարնանը՝ մարտ, ապրիլ և մայիս ամիսներին գառ-  
ների ծնելը համարվում է ավելի հարմար ժամանակ, փո-  
րովհետև մայրը բուրդը խուզելուց առաջ ծնած է լինում  
(ծննդկան եզերին խուզելն անհարմար է համարվում) և  
մայրը ծննդից հետո արածելու չէ գնում և գառնուկին  
լավ կերակրում:

Հավ ե, փոր ծնունդն արոտատեղ հանելուց մի ամիս  
անցած լինի, քանի փոր նոր ծնած մայրերի վրա վատ  
ազդեցություն է անում չոր կերից կանաչ կերի ընկնելը.  
գառներն ել ցրտից նեղվում են:

Ամառը գառների ծնելը լինում է հունիս կամ հու-  
լիս ամիսներին. ավելի ուշ ծնելն անհարմար է, փորովհե-  
տև գուգավորելն ընկնում է մարտ ամսին, չերբ մայրերը  
չերկար մազ ունենալով, փորձերի հետ թույլ են հարաբերու-  
թյան մեջ մտնում: Հունվար և փետրվար ամիսներին դո-  
չերը լավ են գուգավորվում: Ամառվա ծնունդի գլխավոր  
առավելությունը նրա մեջն է, փոր արոտատեղում բավա-  
կանաչափ կեր է լինում և պահելու ծախք քիչ է պահան-  
ջում և գառնուկը մոր կաթը ծծելուց նրա քանակի և  
փորակի վրա աչնպես չի ազդում: Վերջապես ամառը ծնած  
գառներն ազատ են մնում շատ հիվանդություններից, փոր  
առաջանում են ցրտից և մայրերի վատ կերից:

Առնան ծնունդը լավ ազդեցություն ունի սկզբում  
թե մոր վրա և թե գառնուկի, բայց հիվանդանում են  
կանաչ կերից ձմեռվա չոր կերի անցնելուց: Բացի այդ  
աշնանը ծնելուց հետո գառների խնամքն ավելի դժվար  
է, դրա համար ել ընդունված չէ աշնանը ծնունդ ունե-  
նալը:

Ձմեռվա ծնունդը, աչն է դեկտեմբեր, հունվար և  
փետրվար ամիսներին աչն անհարմարությունն ունի, փոր  
մայրերին 3—4 ամիս և ավելի պետք է լավ կերակրել,  
իսկ այդ ձեռնտու չէ, քանի փոր ձմեռն առհասարակ կե-  
րի պակասություն է լինում և թանգ նստում: Բացի այդ

ձմեռը կերակրելը պահանջում է մեծ տեղ, փոշխարանոցը  
տաք պիտի լինի, աղբը դուրս հանած: Ձմեռը գառների  
ծնելը ձեռնտու չէ աչն փոշխարատերերի համար, փորոնք  
ապահովված են կերի և բնակարանի կողմից: Ձմեռվա ըն-  
թացքում գառներին լավ խնամք տանելով, նրանք ամրա-  
պնդվում են մինչև արոտատեղ դուրս գալը:

Յեղն ազնվացնելու համար փոշխարատերերն աշխա-  
տում են, փոր գառները ձմեռը ծնեն:

Միշտ հաշվի պիտի առնել այս կամ աչն սեզոնին  
ծնունդ ունենալու համար գուգավորելը 5 ամիս առաջ  
կատարել:

Եզերին փորձերի հետ ընկնելու ցանկությունը տևում  
է 24—36 ժամ. չեթե այդ ժամանակամիջոցում եզը փոր-  
ձին չի ընդունում, նույն ցանկությունը կրկին չերևում է  
14—21 օրից: ուրեմն պետք է ոգուտ քաղել այդ ժամա-  
նակ դոչերի հետ ձգել:

Փորձերի հետ խառնելուց առաջ եզերի վրա նշան են  
դնում, վզին մի բան կապում:

### 3. ԳԱՌՆԵՐԻՆ ՊԱՇԵՆՈՒ ՅԵՂԱՆԱԿԸ

Հենց փոր գառները ծնում են, մայրը սկսում է գառ-  
նուկին լիզել, կեղտից մաքրել, չեթե մայրը չի մաքրում,  
պետք է մաքուր փալասով կեղտը սրբել: Շատ տեղե-  
րում սովորություն է մտած նորածին գառների վրա աղ  
կամ ալյուր շաղ տալ, փոր մայրը լիզելով նրանց մաքրի.  
այդ սովորությունը պետք է թողնել, աղը գրգռում է  
գառնուկի կաշին: Գառների պորտը պետք է կտրել չորս  
մատ վրան թողած, չեթե ինքնիրեն չի կտրվել ծնելուց:

Գառներին չերկար ժամանակ պետք է թողնել, փոր  
իրենց մոր կաթը ծծեն, մայրական կաթն ամենալավ կերն  
է գառնուկի զարգանալու համար, փորպեսզի մայրը շատ  
կաթ ունենա, պետք է ուտեցնել լավ խոտ, ձակնդեղ, թեփ:



Գառներին մայրերից պետք է բաժանել ծնած որից 2—3 շաբաթ հետո: Յեթե ուզում ենք, վոր նա թե լավ մտացու լինի և թե շուտ զարգանա, թողնում են ավելի չերկար:

Գառների բնական կերը ծնելուց մինչև 14 որն իր մոր կաթը պիտի լինի, բայց այդ ժամանակամիջոցում կարող է պատահել, վոր մայրը գառնուկին ծծելու չըթողնի, կարող է մայրը քիչ կաթ տալ կամ չափազանց շատ, բայց վատ հատկություններ, կամ թե գառն աչս ու աչն պատճառով չի կարողանում մորը ծծել: Այդ շորս դեպքերում փոխարաններն ուշադրություն պիտի դարձնի և առաջն առնի: Դրա համար գառը ծնելուց հետո իսկույն մորը հետ առանձնացնում են և պահում մինչև վոր նրանք սովորում են մեկ-մեկու: Սկզբում ծծել սովորեցնելու համար գառնուկին մոտեցնում են մոր ծծերին և ոգնում ձեռով, բայց հետո նա ինքն է վարժվում: Յեթե մոր ծրծերում շատ կաթ կա, պետք է ավելորդը կթել և չըթողնել կրծքում, իսկ յեթե քիչ է կաթ տալիս՝ գառնուկը սոված չը մնալու համար ձգում են ուրիշ կաթնատու եգի տակ: մորը քիչ կաթ տալու դեպքում, առաջը կարելի չե առնել ավելի սննդարար կեր տալով:

Գառներին ծծից կտրելը միանգամից չի կարելի: Յեթե որական չերեք անգամ է մորը ծծում, պետք է չերկու դարձնել, հետո որական մի անգամ և վերջը՝ որը մեջ: Այդ ժամանակ գառներին անպայման կաթի փոխարեն պիտի տալ սլյուրի թեփ, վարսակի շփոթ որական քառորդ կամ կես ֆունտ: Հինգ շաբաթից հետո կարելի չե տալ աղած վարսակ, մի քիչ քուսպ և մի ֆունտ դադար:

Գառնուկը սովորաբար 2—3 շաբաթ անցած սկսում է մորը հետ խոտ ուտել և ջուր խմել: Արոտատեղ դուրս բերելուց սկզբում զգուշ պիտի լինել, չերկար չըթողնել կանաչ խոտի վրա: հետո կարելի չե քիչ-քիչ չերկարացնել արածելու ժամանակը:

Գառնան կամ աչնան ծնած գառներին կամ ծննդկան

եգերին տաք տեղ պիտի տալ. գոմը գոնե 10 աստիճան տաքություն պետք է ունենա:

#### 4. ԻՆՉՊԵՍ ՊԱՇԵԼ ՎՈՉԽԱՐՆԵՐԻՆ ԳՈՍՈՒՄ

Մեզանում շատ քիչ են ուշադրություն դարձնում փոխարանոցի, ինչպես և նրանց խնամելու վրա: Աչնան ցրտերին և թե ձմեռը փոխարանները շատ անգամ մնում են դրսում բաց չերկնքի տակ և բավարար կեր չեն ստանում. այդպիսի պայմաններում սովածությունից և թե ցրտից լղարում են և չեն կարող իրենց տերերին լավ արգլունք տալ:

Վոչխարանոցը պետք է փոշ շատ ցուրտ լինի և փոշ ել շատ տաք. նա պետք է չոր լինի, պատահան, ողանցք ունենա և միջանցիկ քամիներ չը խաղան ներսը: Խոնավ, կեղտոտ և նեղվածք փոխարանոցը, մանավանդ լավ բուրդ ունեցողների համար վնասակար է և այդպիսի գոմերում հեշտություններն աչս ու աչն հիվանդություններն առաջ գալիս: Վոչխարանոցի հատակի վրա լավ կը լինի մի վերջով հաստություն մոխիր փռել, իսկ մոխրի վրա չոր ծղոտ և անպետք խոտ փռել. այդպիսով փոխարանները նստելու չոր տեղ կունենան, նրանց մեզից ցելս ու կեղտ չի առաջանա, ոգը չի տպականվի և բուրդը չի կեղտոտվի:

Վոչխարանոցը պետք է աչնպես լինի, վոր ամեն մի չափահաս փոխարար պակասը մեկ ու կես արշին լայն և մեկ ու կես արշ. չերկար տեղ ունենա: Ախոռներն՝ ամեն մի չափահաս փոխարին պետք է 8 վերջով, իսկ փոքրերի համար՝ 4—7 վերջով տեղ՝ հատակից 8 վերջով բարձր:

Ախոռները պետք է ճաղերով շինել, վոր խոտը քաշելուց չըթափվի փոխարի տակ փչանա:

Չմեռը փոխարաններին պետք է որական չերեք անգամ կեր տալ, առավոտյան, կեսուրին և չերեկոյան: Ինչ վե-



բաբերում ե մասցու վոչխարներին, նրանց չաղացներու համար պետք ե 4—5 անգամ կերակրել: Պետք ե ախոռները մաքուր պահել, նրանց մեջ տակաճ (թերմացք) չըթողնել: Վոչխարների համար չերեք տեսակ կեր կա.

1. Կոճ կեր— աչն ե՝ չոր խոտ, դարման:

2. Զրալի կեր— կանաչ խոտեղեն, արմատապտուղներ, կարտոֆիլ, բազուկ, գազար և այլն:

3. Ուժեղ կեր— հացահատիկներ, քուսպ և թեփ:

## 5. ԿՈՇՏ ԿԵՐԸ

ա. Չոր խոտ: Վոչխարի կոշա կերի մեջ չոր խոտն ամենից սննդարարն ե. նա լավ ձմեռվա կեր ե, դրա համար ել պետք ե միշտ ձմեռվա պաշար ունենալ չոր խոտի:

Վոչխարի համար ամենալավ չոր խոտը բարձրադիր արոտատեղերից հնձած խոտն ե: Ցածրատեղ և ճախնալին տեղերում բսած խոտը թե կոշա ե և թե քիչ սննդարար:

բ. Ծղոսը յեւ թեփը: Ավելի հարմար կեր են վոչխարի համար լոբու նման բույսերի ծղոտները՝ (քյուլաշը) աչն ե վոսպի, սիսեռի, չերեքնուկի, վիկի և այլն, իսկ հացահատիկների թեփանքը՝ աչն ե վարսակին, կորեկին և բրնձին, չերկրորդական աեղն ե բոնում: Չմեռվա կերի պակասութան պատճառով կարելի չե դարմանով կերակրել. միայն լավ կլինի նրա հետ մանր կտրտած կարտոֆիլ, հասարակ կերի բազուկ և գազար խառնել:

## 6. ԶՐԱԼԻ ԿԵՐԸ

Զրալի կերի մեջ մտնում են՝ կանաչ խոտը, կարտոֆիլը, գետնախնձորը (չերալմասին), հասարակ բազուկը, գազարը:

ա. Կարտոֆիլը սովորաբար տալիս են չեփած. հում

կարտոֆիլ տալուց, կարող ե ստամոքսի հիվանդութուն առաջ գալ: Բացի այդ կարտոֆիլը պետք ե ծլած, փտած, բորբոսնած (չեղնած), ցուրտ տարած չլինի, դրանք թե հղիացած, թե ծննդկան մայրերին փաս են տալիս:

Կարտոֆիլ կարելի չե տալ որեկան ամեն մի գլխին 2—3 ֆունտ չեփած, իսկ չաղացներու համար 4—5 ֆունտ, կարտոֆիլից թե շուտ կչաղանան և թե լավ միս կտան:

բ. Գետնախնձորն իր սննդարար հատկութունով մոտ ե կարտոֆիլին, կարելի չե նույն քանակութամբ վոչխարներին ուտացնել, գետնախնձորի տերեւները ևս ախորժակով են ուտում:

գ. Հասարակ (վոչ քաղցր) բազուկը նույնպես լավ կեր ե վոչխարների համար. չափահասներին կարելի չե տալ որեկան 3—4 ֆ. առանց չեփելու, ավելի տալուց կարող ե փորլուծութուն առաջ բերել: Չաղանալու համար կարելի չե տալ ամեն մի գլխին որեկան 8—9 ֆունտ:

դ. Գազարը լավ կեր ե մանավանդ գառների համար. կարելի ե տալ չեփած: Վոչխարներին կարելի չե տալ գազարի և բազուկի տերեւները, չափահասներին վոչ ավելի քան որեկան 5 ֆ. տերեւները շատ ջրիկ լինելուց մի առ ժամանակ պահում են, վոր թոմշկի, ջուրը քաշվի և չեթեցեխոտ ե, պետք ե լվանալ:

Վերոհիշյալ հյութալի կամ ջրալի կերերն ուտացնում են կտրատած և չոր կերի հետ խառնած, աչն ե դարմանի և թեփի հետ:

## 7. ՈՒԺԵՂ ԿԵՐԸ

Ուժեղ կեր են՝ վարսակը, գարին, աճարը, սիսեռը, քուսպը, վորոնք շատ սննդարար են: Դրանք անհրաժեշտ կեր են (մանավանդ վարսակը) դոշերի և գառների համար: Հացահատիկները պետք ե աղած տալ և խառնել խոտ ու դարմանի հետ:



Քուսպը և թեփը նույնպես լավ կեր են ծառայում. կարելի չե տալ որեկան 1 ֆ. մի գլխին, ջրի մեջ թրջելուց հետո, վոր հազ չառաջացնի ուտելուց: Քուսպը և թեփը լավ ե ջրալի կերի հետ խառնած տալ:

Վոչխարներին կերակրելուց ամեն որ պետք ե աղ տալ, մեծ վոչխարներին որեկան մոտ 2 մսխալ, իսկ ջահեներին կես մսխալ:

## 8. ԱՐՈՏԱՏԵՂԵՐՈՒՄ ՎՈՉԽԱՐ ԱՐԱԾԱՑՆԵԼԸ: ԿԱՆԱՉ ԿԵՐԸ

Վոչխարներին արոտատեղերում պահելը մեծ նշանակություն ունի: Լավ, վոչ խոնավ արոտատեղերն իրենց քնքուշ ու սննդարար խոտերով թե աժան են նստեցնում վոչխարներ պահելը և թե գառների շուտ զարգանալուն նպաստում:

Վոչխարներին փաս ե բերում գարնանը շատ վաղ, խոտերի դեռ նոր ծլած ժամանակն, արոտատեղ դուրս բերելը:

Արոտատեղերն ել այն ժամանակ նրանց վոտի տակ տրորվելով փշանում են:

Մեզանում շատ վատ սովորություն կա, վոր վոչխար ունեցողները, հենց վոր ձյունը վեր կացավ, խոնավ ու թաց դաշտն են հանում վոչխարներին, նրանք ազահարար վրա լեն ընկնում հողից նոր գլուխը բարձրացրած խոտերի վրա և կրծելուց կուլ են տալիս և նրանց կպած հողը, վորից խանդավում են նրանց մարսողական գործարանները:

Յերբ վոչխարներին ձմեռվա չոր կերից հետո կանանչ կեր ուտացնելու համար հանում են հանդն արածացնելու կամ ամառվա կանաչ կերից հետո սկսում ձմեռվա չոր կեր ուտացնելը, պետք ե այդ միանգամից չանել: Գարնանն արոտատեղը դուրս բերելուց առաջ, պետք ե չոր կեր ուտացնել և հետզհետե վարժեցնել, հակառակ դեպքում նը-

րանք կարող են փորլուծութուն ստանալ, վորը փասակար ազդեցություն կունենա թե իրենց և թե ծծկեր գառների վրա: Կանաչ կերից չորի կապելու ժամանակ ել նույնպես պիտի վարվել այն ե՝ կանանչ կերի հետ չորը խառնելով հետզհետե վարժեցնել:

Տանը կանաչ կեր ուտեցնելուց, պետք ե հետևել, վոր նա թարմ լինի, դրա համար ել պետք ե խոտը հնձել վոչխարներին կեր տալուց քիչ առաջ և վոչ թե հնձած խոտը բերել, թուփակ դնել և լերկար պահել, դրանից խոտը տաքանում խմորվում ե, իսկ այդ անասունների համար փասակար ե:

Նույնպես չպետք ե կերակրել ցողով (շաղով) կամ անձրևով թրջված կանաչ խոտով:

Կանաչ կեր ուտեցնելու ժամանակ վոչխարներին շուտով ջուր չպիտի տալ:

## 9. ՎՈՉԽԱՐՆԵՐԻ ՅԵՎ ԳԱՐՆԵՐԻ ԶԱՆԱՑՆԵԼԸ

Վոչխարների և գառների չաղացնելը լավ արդյունք կարող ե տալ պահողին: Այդ բանն արտասահմանում շատ վաղուց են հասկացել, մանավանդ անգլիացիները, վոր 9 ամսականում նրանք 4 և կես փութ քաշ են ունենում:

Քանի վոր Կովկասում վոչխարի միան ափելի բարձր գին ունի, քան թե տավարինը, նրա պահանջն ափելի շատ ե քաղաքներում, մեր տեղական վոչխարների միան ափելի համեղ ե, քան Ռուսաստանի և այլ տեղերինը, պետք ե ուշ դարձնենք վոչ միայն վոչխարապահութան զարգացման վրա, այլև ծանոթանանք չաղացնելու (քյոբացնելու) յեղանակի և միջոցների հետ:

Չաղացնելը լինում ե կամ շատ միս ստանալու համար կամ թե չե շատ ճարպ: Բարձր հատկությունով միս ստանալ կարելի չե միայն գառներին չաղացնելուց. ջահել կենդանիների միսը պառավներից թանգ արժեք ունի, վորով-



հետև պառագիւնքի միւսը թե կոշտ ե լինում, թե քիչ համեղ ե թե քիչ սննդաբար, դեռ շատ անգամ ել առանձին վատ հոտ ունի: Ջահել հասակում պարարտացնելն ավելի ձեռնաու չե, շուտ են չաղանում, միսն ավելացնում, աչնինչ պառավ վոշխարներին պարարտացնելու համար ինչքան ել կեր տանք, նրանք միս չեն ավելացնում, այլ ճարպն ե շատանում:

Պարարտացնելու համար չպետք ե կերի խնայողութիւն անել: Չաղացնելու համար ընտրած վոշխարանոցը շատ լույս չպետք ե լինի, միայն պետք ե հետեւել, մաքուր պահել ե ողջ շուտ շուտ փոխել: Վոշխարանոցը շատ ցուրտ չպիտի լինի: Նկատված ե, վոր բուրդը խուզած վոշխարներն ավելի լավ են չաղանում. պարարտացնելուց վոշխարներին չպետք ե դրսում չերկար ժամանակ թողնել, դեռ ու դեն քշել:

Գառներին չաղացնելը սկսելում են մոտավորապես 8 ամսականից: Պառավ վորձ ե թե եզ վոշխարներին ձեռնաու չե չաղացնել միս համար. նրանք ավելի ճարպ (փի) կտան, քան թե միս, իսկ առամները թափված պառավ վոշխարներին չարժե չաղացնել, նրանք դժվարութիւնով են կերն ուտում ե մարսում:

Վոշխարներին, ինչպես ե մշուտ անասուններին, կերակրելու ժամանակամիջոցը տեղում ե 2—4 ամիս:

Մեզանում վոշխարները չաղանում են գլխավորապես չալաղատեղերում, սար տանելուց. նրանց աչնանը սարից բերելուց հետո ձմեռը միայն չոր խոտ ու դարման են ուտեցնում ե աչն շատ չափավոր, աչնպես վոր նրանք ունեցած չաղութիւնը կորցնում, մաշվում են:

Անհրաժեշտ ե ձեռքի տակ ունենալ աւովույտի, կորնգանի ե ուրիշ խոտեղենի ցանք, ինչպես ե արմատապուղների, վոր ձմեռը վոշխարը կերի առատ պաշար ունենա ե իր արժեքը չը կորցնի:

Մի շարք փորձեր ցուցն են ավել, վոր մարտ ամսին

ճնած գառը լավ կեր ուտացնելուց, կենդանի քաշի վրա ավելացրել ե մայիսին 9 ֆունտ.

|                 |       |
|-----------------|-------|
| « « հունիսին    | 16 ֆ. |
| « « հուլիսին    | 18 „  |
| « « ոգոստոսին   | 15 „  |
| « « սեպտեմբերին | 12 „  |
| « « հոկտեմբերին | 12 „  |
| « « նոյեմբերին  | 8 „   |
| « « դեկտեմբերին | 6 „   |
| « « հունվարին   | 5 „   |
| « « փետրվարին   | 13 „  |
| « « մարտին      | 16 „  |

Ընդամենը՝ 130 ֆ.

կամ 3 փ. 10 ֆ. ե աչն մի տարվա ընթացքում:

Կերը գլխավորապես չեղել ե դարման՝ հացահատիկների ե արմատապուղիների հետ խառնած:

## ՔԱՇԻ ՀԱՍԵՄԱՏ ԿԵՐ ՏԱԼԸ

Վոշխարներին այս ու աչն մթերքով կերակրելու համար պետք ե իմանալ նրանց քաշը ե թե մի կեր ձեռքի տակ չունենալու ժամանակ ուրիշ կերից ինչ քանակութեամբ պետք ե տալ կամ չեթե չերկու տեսակ թուլ ե ուժեղ կեր են տալիս, ամեն մեկից վորքան պիտի վերցնել, խառնուրդ անել: Կենդանի քաշն իմանալ դժվար չե, չեթե տամորդական կշիռ կա ձեռքի տակ:

Անասունների կերի մի մասը ծառայում ե նրանց կյանքը պահելու ե մի մասը մթերք տալու, աչն ե միս, ճարպ, բուրդ: Կյանքը պահպանելու համար կերի պահանջը վորոշում ե նրանց կենդանի քաշով, վորքան անասունի քաշը ծանր ե, աչնքան ել նա կերի մեծ պահանջ ունի: Այսպես ել նաչելով նրա տված մթերքի քանակին, պետք ե վորոշել կերի պահանջը. վորքան նա շատ մթերք ե տալիս, աչնքան ել նա շատ պահանջ ունի կերի:



Կենդանի քաշի ամեն 100 ֆունտին պետք է տալ մի միլիլիտր կեր: Այդքան ել պետք է տալ ամեն մի կվարտ կաթ ստանալու համար:

Մի միավոր կերին հավասար են հետեւյալ մթերքներէ ընդ քանակը—

3 ֆունտ մարգագետնի չոր խոտ կամ 12 ֆ. կանաչ խոտ

4 ֆ. ճախնային տեղի խոտ կամ 16 ֆ. „ „

4—5 ֆ. դարման կամ ծղոտ

8 ֆ. յերեքնուկ.

4 ֆ. կարտոֆել.

8—10 ֆ. բազուկ.

8 ֆ. հասարակ գաղար.

1 ֆ. հացահատիկի ալյուր.

1 ֆ. քուսպ կամ թեփ:

Սակայն պետք է աչքի առաջ ունենալ, վոր չի կարելի մի միավոր չոր խոտին, այն է 3 ֆունտի փոխարեն 1 ֆունտ թեփ կամ մի ֆունտ ալյուր տալ և դրանով բավականանալ: Պետք է միշտ այս ու այն մթերքներից հետը խառնել:

Յեթե եզ վոշխարը քաշում է 3 փութ և ուզում ենք նրանից 2—3 կվարտ կաթ ստանալ, պետք է նրա կյանքը պահպանելու համար տալ 1 միավոր, իսկ 2 կվարտ կաթ ստանալու համար ավելացնել և 2 միավոր, ընդամենը 3 միավոր, վորը հավասար է 3 ֆունտ ալյուրի, 9 ֆունտ չոր խոտի, 36 ֆունտ կանաչ խոտի, 12—15 ֆունտ դարմանի, 12 ֆունտ կարտոֆիլի և այլն:

Ծնելու մոտեցած եզ վոշխարին թե իր կյանքը պահելու համար և թե ապագա զավակին զարգացնելու համար ավելի պիտի կերակրել և ուժեղ կեր տալ գոնե 1—1 ու կես միավոր կամ 1—1 ու կես ֆ. ալյուր, քուսպ: Այդպես ել կերի քանակը պիտի ավելացնել, չերբ նկատում են, վոր եզը կաթը հետզհետե շատացնում է կաթից կը-

տրվելուց ընդհատապէս քշացնում են կերի քանակը և նրա քաշի համեմատ կերակրում:

## 11. ՎՈՇԽԱՐՆԵՐԻՆ ԶՈՒՐ ՏԱԼԸ

Վոշխարները ջրի շատ պահանջ չունեն: Նրանց կենդանի քաշի մեկ տասնընիւղ յերրորդական մասի քանակութեամբ ջուրը բավական է: Չափահաս վոշխարը քաշում է 2—2 և կես փութ, պետք ունի 5—6 ֆունտ ջրի: Զուրը պետք է քաղցր և պարզ լինի, վաս ջրից ինչպես մարդիկ, այնպես ել վոշխարները կարող են հիվանդանալ տիֆով և մի շարք լուրջ հիվանդութեաններով:

Սմելու ջրի մեջ ամենից ընտիրն աղբյուրի քաղցր ջուրն է և անձրեւայուրը, չերբ անձրեւի վերջերին է հաւաքւում: Կով են նույնպես գնացկան ջրերը, թե առունների և թե գետերի, չեթե նրանց մեջ քաղաքից շատ կեղտոտութեաններ չեն թափւում:

Սմելու ջուրը չպետք է վոշ շատ ցուրտ լինի և վոշ ել շատ տաք. ցուրտ ջուրը հանում է մարմնի տաքութեանը և քշացնում կաթը, իսկ տաք ջուրը ծարավը չի կոտրում: Բացի այդ ցուրտ ջուրը կարող է հիվանդութեան առաջ բերել: Սմելու ջրի տաքութեան աստիճանը 10—12 պիտի լինի: Փորձերը ցույց են տվել, վոր 2—6 աստիճան տաքութեան ժամանակ վոշխարները և կովերը սկսել են կաթը քշացնել. դրա առաջն առնելու համար կամ շատ սառը ջուրը պետք է տաքացնել, հասցնել 8—12 աստիճանի կամ ցուրտ ջուրը տաք տակառներում պահել և հետո խմացնել:

Վոշխարներին գոմում պահելուց բավական է որական մի անգամ ջուր տալ. ձմեռը հանդը հանելուց կարիք չկա ջուր տալու, նրանք ինքնուրուշ ծարավը կոտրում են ձյունից ոգտվելով: Կանաչ և հյութալի խոտատեղերում արածացնելուց նույնպես կարիք չկա ջուր տալու:





## 12. ՎՈՋԻԱՐԻ ԲՐԴԻ ԽՈՒՁԵԼԸ

Բուրդ ստանալու համար վոջխարներին խուզում են հասարակներին տարին յերկու անգամ վաղ զարնանը և աշնան սկզբին, իսկ մերինոս ցեղի վոջխարներին 2—3 անգամ: Վոջխարներին խուզելու համար առանձին մկրատ կա: Վորպեսզի խուզելու ժամանակ վոջխարը հանգիստ մնա, չշարժվի, կաշին չվիրավորվի, փոտները կապում են, մաքուր հատակի կամ սեղանի վրա պառկեցնում: Ծննդահան վոջխարներին չեն պառկեցնում:

Սուզելուց պետք է աշխատել, փոր բուրդը հավասար խուզվի և աչն ել տակից, կաշու մոտից վիրավորված տեղերին պետք է սկիախտար կամ մազուտ քսել:

Հասարակ վոջխարից ստացվում է տարեկան 5—6 ֆունտ բուրդ, իսկ մերինոսից միջին հաշվով 9—12 ֆունտ. կան տեսակների, փոր տալիս են 14—20 ֆունտ, փորձերն ավելի բուրդ են տալիս, քան եզերը:

Բուրդը կեղտից և քրտինքից մաքրելու համար խուզելուց առաջ լողացնում են գնացկան ջրերում, առուններում, գետերում, աղբյուրի տակ կամ լեթե ջրմուղ մեքենա (նոսոս). կա, զբանով: Սուզելուց առաջ բրդի լվանալն աչն առավելութունն ունի, փոր նա չի մձձվում և հեշտ և չորանում: Սուզելուց մի որ առաջ լավ է վոջխարների վրա ջուր սրսկել, փոր կեղար թուլանա, հեշտ մաքրվի:

Հաստ կաշի ունեցող վոջխարի բուրդը խիտ ու կոշտ է լինում, իսկ բարակ կաշի ունեցողին՝ սեղրակ ու բարակ. պիքի կաշու վրա ընտիր և ուժեղ, բայց կարճ բուրդ է դուրս գալիս, փափուկ կաշու վրա, ընդհակառակը, յերկաշն, բայց թույլ: Շատ հաստ, բայց փափուկ կաշի ունեցող վոջխարները փոշ լավ բուրդ կտան և փոշ ել լավ միս: Առողջ վոջխարի կաշին կարմրագույն է, իսկ սպրանաձ, կապտագույնը նշան է նրա հիվանդ լինելուն:

## 13. ԿԱԹԸ ԿԹԵԼԸ ՅԵՎ ԿԱԹԻ ՈԳՏԱԳՈՐԾԵԼԸ

Վոջխարներին պետք է կթել առավոտյան արոտատեղը բաց թողնելուց առաջ. նրանք տալիս են որական 2 ֆ. կաթ և աչն ել 4—5 ամիս շարունակ, յեթե լավ արածելու տեղեր կան: Գառներին ծծից կտրելուց հետո կթում են և յերեկոները:

Կթելուց առաջ պետք է կուրծը և ծծերը լվանալ, սրբել, ցամաքեցնել, փոր կաթձ աղբը, կեղտը կաթի մեջ ընկնելով նրան չապականի: Կթողը պետք է ձեռները նախ լվանա և հետո սկսի կթելը, կթելուց առաջ կուրծը սեղմելով մաժում են, արորում և ապա ծծերը բռնելով կրթում: Առաջին անգամ յեկած կաթը պետք է թափել, նրա մեջ կարող է կեղտ և ուրիշ հիվանդութուն լինել, մինչև վերջին կաթիլը կթում են, կուրծում կաթ չեն թողնում: Վերջին յեկած կաթն ամենից չուղալին է և թանձր: Շատ անգամ կթելուց կաթը կապվում է, չե գալիս, պետք է նորից կուրծը արորել և նորից կթել: Կթելը բոլորովին վերջանալուց հետո ծծերը չոր շորով պետք է սրբել—ցամաքեցնել:

Կթելու ամանն առաջուց լավ լվացած և մաքուր պետք է լինի: Կաթի ամանի մեջ յեթե կեղտ, փոշի, ճանձ կամ այլ միջատներ են ընկնում, պետք է քամիչի, մաղի կամ թանձիֆի միջոցով քամել, մաքրել:

Կաթը կթելուց հետո պետք է շուտով դորժաղրել, փոր նա չթթվի, չկտրվի: Յեթե չեն ուղարկում ուրիշ տեղ, յեթե սեփական անտեսության մեջ է դորժաղրվելու՝ մաժուն կամ պանիր պատրաստելու, պետք է յերկար չպահել. մաժուն կամ պանիր պատրաստելուց մինչև 28—30 աստիճան տաքացնում են և մերում:

Վոջխարի կաթը մեղանում գլխավորապես դորժաղրվում է պանիր պատրաստելու. յերեսը չքաշած մոթալի պանիրը Պարաբաղում և Նախիջևանի շրջանում շատ տա-



բաժված է. հասարակ պանրագործութեամբ պարտավորւում են Յերեանի նահանգում հայերն ու քրդերը, գլխավորապէս լեռնային շրջաններում: Վոչխարի մածունն ավելի հարգի չէ, քան կովի մածունը:

100 ֆունտ կաթից սովորաբար ստացվում է 20 ֆ. պանիր կամ 4—6 ֆ. յուղ:

Վոչխարի արտաքին գագաճումները, բնագլոր և հասկացողությունը, հոստոքությունը յեւ ճեստոքությունը փոշխարների մեջ կարծես թէ շատ է զարգացած. պատմում են, փոր լեռնային շրջաններում փոշխարների ցեղը շատ հեռու տարածութիւնից գգում է գայլերի մոտենալը: Այդպիսի փոշխարների ականջները դիք են, շարժուն և շատ զարգացած, ընդհակառակը ականջները կախ ընկած փոշխարների լսողութիւնն աչնպէս սուր չէ:

Մայրական գագաճումներ փոշխարների մեջ ավելի քիչ է զարգացած, քան մշուս անասունների մեջ: մայրը խնամք է տանում գառնուկին, քանի փոր նա կարիք է զգում մորը: Վոչխարների համայնքով (հոտով), աչն է միասին ապրելու, հատկութիւնն ընտանի կենդանիների մեջ ամենաբարձր տեղն է բռնում: Յեթե հարցուրից մի փոշխար հետ է մնում, աչգ բանը վախ է ձգում մշուսների մեջ և խռովութիւնն ձգում: Շատ անգամ կարելի չէ տեսնել, փոր մի հիվանդ փոշխարի շուրջ հավաքվում են խմբերով և կամ հովվի առջևից փախած փոշխարի հետեւից վազում են մշուսները: Մեծ արոտատեղերում շատ անգամ փոշխարներն առանց հովվի մնում են շների հովանավորութեան տակ և փոշխարը չի բաժանվում իր ընկերից. միայն կերը պակաս ժամանակ արոտատեղում նրանք ցրվում են, իսկ գոմում հավաքված ժամանակ ուժեղները թուլների կերը խլում:

Վոչխարների համկացողությունը ստոր է, քան մշուս ընտանի կենդանիներինը. չեթե պատահմամբ փոշխարի մեկը գոմից դուրս է պրծնում, փոշ մի գետ, փոշ մի ան-

դունդ, փոշ մի բան նրան չի կանգնեցնում. նա խելագարի պէս վազում է, գլուխը քարի, պատի դիպցնում, ժայռից ընկնում, լճակների մեջ խրվում: Հրդեհ պատահելուց, յերբ գոմն այրվում է, մինչև մեկ-մեկ չեն հանում միջից, նրանք դուրս չեն գալիս:

#### 14. ՎՈՉԽԱՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վոչխարների վարակիչ հիվանդութիւններից հայտնի չեն քոսը, ծաղիկը, սիբիրախտը, դաբաղը, սպիտակ փորլուծութիւնը և այլն:

Մահացութիւնն պատճառող պարագիտներից հայտնի չեն՝ ստամոքսի կոլոր ճիճուները, թոքերի և փայծաղի քլափանակը, գլխի և ուղեղի փամփշտային ճիճուները:

Մշուս հիվանդութիւններից՝ փորի ուռչելը, բրդի կրծելը, շրգողութիւնը, սեռական անդամի բորբոքումը, արյունոտ մեզը, տեղերը, բոռերը, հարբուխ ընկնելը, բկի ուռչելը, հոդացավը, կուրծի բորբոքումը և այլն:

1. Քոսը շատ տարածված հիվանդութիւնն է թէ Ռուսաստանում և թէ Կովկասում: Դրանից փոշխարները լավ չեն չաղանում, լղարում են, քիչ բուրդ տալիս, մահացութիւնն ավելի չէ պատահում և բժշկութիւնը մեծ ծախք նստում:

Քոսն առաջանում է աչքով հազիվ տեսանելի մանր միջատներից՝ փոսային սիգերից: Աչգ տիգերի կծելուց փոշխարներն սկսում են իրենց կրծել, փոտներով և պոզերով իրենց մարմինը քորել, բուրդը չեթե չեն կարողանում ատամներով պոկել, քսքսում են քարերի, ծառերի, ինչ փոր պատահում է: Հիվանդութիւնը սաստիկ զարգացած ժամանակը բուրդն սկսում է թափվել, դեղին գույն ստանալ: Մարմնի բաց տեղերի վրայի կոշտերից, բրդի գուլնը փոխվելուց և քորելուց կարելի չէ զանազանել քոսը կաշվի և ուրիշ պարագիտներից առաջացած հիվանդութիւններից:



Ամառը տաք ու չոր լեղանակին քոսի տեղերն աչն-  
պես վնաս չեն տալիս, ինչքան աշնանը և ձմեռը նեղվածք  
և ոգը ապականված գոմերում վոչխար պահելուց:

Յեթե մի հոտի (սյուրուլի) մեջ քոսը նկատվի, վոչ-  
խարատերն իսկույն հիվանդներին պետք է առանձնացնի,  
մինչև անգամ արոտատեղում մոտ չթողնի ուրիշ կասկա-  
ծավոր հոտերի:

Բժեկուրյուն.— Քոս հիվանդության առաջն առնելու  
համար աշնանը լողացնում են թամբաքուլի ջրով: Զմեռը  
քոսով վարակված տեղերը սկիպիտար են քսում. գարնա-  
նը տաք լեղանակին հիվանդներին պետք է լողացնել թամ-  
բաքուլի խաշու. ջրով և այդ կատարել բուրդը խուզելուց  
չերեք շաբաթ անցած և կրկնել 7—10 օրից: Թամբաքուլի  
խաշուն մինչև անգամ ոգնում է բրդի շուտ աճելուն և  
կոտորում տիգերը:

Քոսի տեղերի եզրը դնում է 15—24 ձվաներ. այդ ձվա-  
ներից 6—7 օրից նոր տեղեր են դուրս գալիս և իրենց  
հերթին 7—9 օրից ձվաներ դնում, նոր սերունդ առա-  
ջացնում. դրա համար ել անհրաժեշտ է լերկորոգ անգամ  
թամբաքուլի խաշուով լողացնելը: Թամբաքուլի ջրով լողա-  
ցնելուց առաջ խորհուրդ են տալիս լողացնել մոխրաջրի  
կամ կանաչ սապնաջրի մեջ:

Մոխրաջրի համար պոտաշ վերցնում են 100 մաս  
ջրին 4 մաս և հետը խառնում 2 մաս չհանգած կեր:

Թամբաքուլի խաշուն պատրաստում են այսպես. վեր-  
ցնում են մի վեզրո մեկ ու կես ֆունտ մախորկա, տաք  
ջրի մեջ ձգում, պահում, մինչև վոր մութ դարչինի գույն  
է ստանում, հետո կաթնալուծ լեփ են տալիս, շուրը քա-  
մում, իսկ պինդ մնացած մասը խառնում նորի հետ, լեր-  
կորոգ անգամ լեփելուց: Թամբաքուլի խաշուի շուրը լըց-  
նում են մեծ ու խոր տաշտակի մեջ, քոս ընկած վոչխա-  
րը 8—10 անգամ կոխում մեջը, հանում, վերջին ան-  
գամ վոսներին ընծած զլուխը քաշ կախ տալիս, վոր գլուխն

ել թրջվի և իսկույն հանում: Լողացնելուց հետո լեթե  
նկատվի, վոր վոչխարը թունավորվել է թամբաքուլից,  
պետք է հանել գուրսը և գլխին ու մեջքին ցուրտ շուր  
ածել:

Լողացնելուց հետո պետք է ցրտից պաշտպանել վոչ-  
խարներին և լավ խոտով կերակրել:

Պետք է քոս ընկած վոչխարներին առաջվա արոտա-  
տեղում բաց թողնել արածելու. այդ կարելի է գոնե մի  
ամսից հետո:

Գոմանոցը պետք է աղբից մաքրել պատերը և ա-  
խոռները թամբաքուլի և թե կրի ջրով ներկել կպած տե-  
ղերը փշացնելու համար:

2. Վոչխարի ծաղիկը.— Ծաղիկ հիվանդութունը  
հիվանդներից անցնում է առողջներին թե մեկ մեկի մո-  
տենալուց, թե մարդկանց և թե բրդի-միջոցով: Ծաղկի  
վարակը կարող է մնալ 6—7 ամիս: Վարակումն առաջա-  
նում է և ի ուղի միջոցով:

Հիվանդութունն սկսվում է ջերմով, տաքութունը  
41—42 աստիճանի բարձրանալով: Հիվանդի մարմնի ան-  
մազ տեղերի վրա, աչն է ազդրների ներքին մասում, գլն-  
չին, աչքերին, քթին առաջ լերելում են կարմիր բշտիկներ  
և 5 օրից նույն տեղում առաջանում գեղին և թափան-  
ցիկ հեղուկով լիքը փամփշտիկներ: Մոտ մի շաբաթից  
փամփշտիկների միջի նյութը մզանում է, փոքրանում,  
չորանում և թափվում:

Հաջող պայմաններում հիվանդութունը վերջանում է  
չերեք շաբաթվա ընթացքում: Հիվանդութունը հաջող  
դնալուց հիվանդների 100-ից 5—10-ը մահանում են, իսկ  
ցուրտ լեղանակին և վատ պահելուց՝ շատ:

Հիվանդության առաջն առնելու համար հոտի բոլոր  
վոչխարների ծաղիկը պետք է գրել տալ: Դրա համար  
պետք է դիմել անասնաբուծին կամ նրա ֆելդշերին: Մե-  
րինոս ցեղի վոչխարները ծաղկից ավելի են ընկնում, քան  
կոպիտ բուրդ տվող ցեղի վոչխարները:



3. Սիբիրական առաջանում է մանրագետ գործիքով տեսանելի մանրեններից. վոչխարը ևս այդ ախտով հեշտ է վարակվում ինչպես մեծատավարը: Վոչխարները պիտավորապես կոտորվում են այդ ախտից ամառը, շատ տաք չեղանակին, բայց պատահում է և ամբողջ տարվա ընթացքում: Այդ ցավով բռնվածը մի քանի բույսերից մահանում է, թեթեւ ժամանակ տեւում է մի օր:

Վոչխարները վարակվում են այն արոտատեղերից, վորտեղ հիվանդ անասուններ են արածել կամ մահացածներին այնտեղ թաղել: Հիվանդ վոչխարների մորթը հանելուց մարդիկ ել կարող են վարակվել, զրա համար ել խստիվ արգելված է կաշին չհանել, այլ տեղն ու տեղը սառկած վոչխարներին կրակ տալ: Հողի տակ ծածկելն այնքան ել հուսալի միջոց չէ, չնեքը կարող են հանել և հիվանդութիւնը տարածել:

Հիվանդութիւնը չերեւալուց առանց ուշացնելու պետք է անասնաբուժին դիմել գլուղի բոլոր վոչխարները պատվաստելու:

4. Դաբաղը, այն է վոչխարի կաղի տալն առաջանում է կճղակների (դոնաղի) նեխելուց, փտելուց: Փառութիւնն սկսում է կամ կճղակի դրսի կողմից, նրա ծայրից կամ կրունկից: Դաբաղի ժամանակ բշտիկներ են դուրս գալիս. կճղակի վերեւ մասը ջրակալում է և դոնաղը շատ անգամ ամբողջապես ընկնում: Դաբաղի ժամանակ վարակվում են սովորաբար մեկը մյուսից: Հիվանդութիւնն պատճառներն են թաց արոտատեղերը, կեղտոտ գոմերը, վոչխարների դոնաղները, ժամանակին չկտրելը և մաքուր չը պահելն:

Բժշկությունը. — Դաբաղի չերեւալուց պետք է աշխատել առողջներին հեռի պահել, մեկի հոտը չմոտեցնել մյուսին, թաց, ջրջրոտ տեղերում չարածացնել, չթողնել, վոր դոնաղը ծոծովի.

Դաբաղի դեմ գործադրում են հետևյալ միջոցը. ազո-

տի կամ ծծրաթթվի ջուր են ածում տափակ տաշտակի մեջ և վոչխարներին միջից անցնել տալիս, վոր վոտները թրջվեն: Այդ ճաքերի 2 մսխալին 10 ֆ. ջուր են խառնում: Ոտրհուրդ են տեսնում և սուլեման, փորը վերցնում են 1 մսխալին 10 ֆ. ջուր: Նաչելով դաբաղի տարածվելու սաստկութիւնն կամ թուլութիւնն, այդ ձևով կճղակների ախտահանելը կատարում են շաբաթը կամ ամիսը մի անգամ:

5. Անուխ (սպիսակ) փորութիւնը. — Այս ցավը պատահում է գլխավորապես բարակ, նուրբ բուրդ ունեցող գառների հետ: Մահացութիւնն առաջանում է մորը կաթի միջոցով փոխադրված աղիքային բացիկներից, մանրեններից: Հիվանդացած 100-ից մահանում են 50—80-ը:

Փակ, ողից վատ և նեղվածք գոմում հիվանդութիւնն ավելի չէ զարգանում. գառները դադարում են ծծելուց, տխրում են, փորներն ուռչում և: Աղբը (կտեոր) սկզբում սպիտակ գույն է ունենում, հետո մգանում է, 2—3 օրից մեջը արշուն է նկատվում: Գառների մեծ մասը կոտորվում են առաջին չերեք օրում: Մահացութիւնը հասնում է 60—80 տոկոսի:

Գոմանոցի մաքուր պահելուց և ողը փոխելուց ճերմակ փորութիւնը քիչ է պատահում: Հիվանդ գառներին խորհուրդ են տալիս ամեն օր բերանն ածել սալիցիլյան թթվուտի նաղը մի հացի գդալ: Ամերիկայում զրա առաջն սունում են պատվաստ անելով, փորը դեռ Ռուսաստանում չի գործադրվում:

6. Ախուկներ. — Այս հիվանդութիւնն յենթարկվում են ավելի մեքինոս և անգլխական մսացու վոչխարները, քան հասարակ տեսակը: Ծիճու ունեցող գառները լղարում են, մաղասալին գործարանները սպրդնում են, բուրդը չորանում և ճիճուների սաստիկ շատանալուց՝ փորկապութիւն, փորութիւն և առաջ գալիս. հիվանդի մարսողութիւնը խանգարվում է և քիչ չի պատահում, վոր դրանից մահանում են:



Քառների փորլուծութիւնը նշան է նրանց ճիճու ունենալուն: Վոշխարների ճիճուներով վարակվելն առաջանում է գլխավորապէս ցածրագիր և խոնավ արոտատեղերում արածացնելուց, մանավանդ անձրեակին տարիներին:

**Բժեկութիւնը.**— Ճիճուների առաջն առնելու համար պետք է զգուշանալ, խոնավ, ցածրագիր, կանգնած ջրերի մոտ չեղած արոտատեղերում չարածացնել, կանգնած և կեղտոտ լճակներից ջուր չխմեցնել. նրանք կանգնած ջուրը խմելով և մոտը չեղած խոտն ուտելով, խոտի հետ կուլ են տալիս և ճիճուների սաղմեր:

Վորպեսզի այսպիսի արոտատեղերում վարակիչ ջուր չխմեն, հանդը դուրս բերելուց առաջ առավոտյան տանը պետք է ջուր տալ:

Մահացածների ստամոքսը բանալուց կարելի չէ իմանալ, ճիճուներն իրենք են չեղել պատճառը, թե ուրիշ հիվանդութիւն:

Ճիճուներին կոտորելու համար խորհուրդ են տալիս վուշի (կտավատի) ձեթի հետ սկիպիտար խմեցնել:

7, Թոքերի քեյաձեղ ճիճուները. — Այս հիվանդութիւնը պատահում է գլխավորապէս այն տնտեսութեաններում, վորտեղ խոնավ, ջիւճիմոտ արոտատեղեր կան և կանգնած ջրեր. վոշխարները ջուր խմելուց կամ վատ կերից վարակվում են նրանց թոքերը և հազ առաջանում: Հազալուց ճիճուներն իրենց ձվաներով կամ սաղմերով ընկնում են խոտերի վրա, լճերի կամ առուների մեջ, վորտեղ նրանք բազմանում են և առողջ վոշխարներն այդ վարակված խոտն ուտելուց կամ ջուրը խմելուց իրենք ել վարակվում են, հազում, լորձուք (բլլամ) ձգում. շնչառութիւնը դժվարանում է, ախրում են, ախորժակները կապվում և լղարելով հարչուրին 10-ից մինչև 70-ը մահանում:

Մահացած վոշխարներին քննելով, նկատվում են նրանց թոքերի մեջ խուլեր, վորը կարելուց դուրս են դա-

լիս միջից թելանման ճիճուներ. նրանք բուն են դնում և շնչափողում: Մորթելուց հետո հիվանդների թոքերը պիտի ալրել:

Առաջն առնելու նպատակահարմար միջոցը վոշխարներին ձմեռը լավ կերակրելն է. գարնանը ճիճուներն իրենք իրենց են թոքերից դուրս տալիս:

8. Լյարդային ճիճու (բլափանագր) ամենից վտանգավորն է պարագլխոներից: Վոշխարներին մեծ փաս են տալիս այն շրջաններում, վորտեղ կան թաց, ցածրագիր արոտատեղեր և կանգնած ջրեր: Լյարդի ճիճուն ընկնելով լյարդի մեջ ծծում, քայքայում է նրան. հիվանդ վոշխարը լղարում է, քիթը պոռնուց սպրտնում, չորանում, աչքերը ջրակալում, կրծքի և փորի վրա ուռուցներ առաջանում, փորը լուծում կամ կապվում:

Ճիճուների բազմանալուց հիվանդութիւնը սուր կերպարանք է առնում և 8—9 օրից վոշխարը մահանում է:

Լյարդի ճիճուներից առողջները վարակվում են այսպէս. հիվանդ վոշխարները կտտելուց կտիտի հետ դուրս են դալիս ճիճուների ձուերը. յեթե այդ ձուերն ընկնում են ջրի մեջ կամ խոնավ ճահճոտ տեղ, նրանցից 3—4 շաբաթից հետո փոքրիկ վորդեր են դուրս գալիս և կպչում խոտերին կամ ընկնում ջրերի մեջ: Վոշխարներն այդ խոտըն ուտելուց կամ ջուրը խմելուց մտնում են նրանց ստամոքսը, իսկ ստամոքսից անցնում են աղիքներին և աղիքների պատերից լեղիատար անցքերով մտնում լյարդի մեջ և նրան քայքայում:

Հիվանդ վոշխարի լյարդն առողջների հետ համեմատած շատ մեծ է և պինդ, կարելիս զրծում է, կարծես թե մեջն ալվազ լինի ածած: Լյարդը ճղելուց նրա լեղիատար անցքերից դուրս է գալիս կանաչ գունով լորձուք և խլափանակ վորդը:

**Բժեկութիւնը.**— Այս հիվանդութեան առաջը կարելի չէ առնել միայն վոշխարներին ճահճոտ և խոնավ արոտա-



տեղերից հեռի պահելով և լավ կեր ուտեցնելով: Հիվանդ վոչխարների աղբը չպետք է առունների մեջ թափել, փոր-տեղից վոչխարը ջուր է խմում, լավ է աղբը կրակ տալ կամ հողի տակ մի յերկու տարի ծածկած պահել: Բացի այդ պետք է աշխատել վոչնչացնել ջրառունների մեջ կամ կողքերին բաժ խոտերի վրայի խխունջները, չորացնել ճահիճները և շատ ջրջրոտ խոտատեղերը: Վարակված տեղերից վոչխարներ չբերել և հիվանդության դեպքում մասնագետներին, անասնաբույժներին դիմել:

9. Վոչխարների պսույս պսույս գալը.—Ով փոր գործ է ունեցել վոչխարների հետ կամ ապրել վոչխարապահության շրջանում, անկասկած նկատած կլինի գլխապրտույտ անող վոչխարներին:

Այդ հիվանդությամբ բռնվելուց վոչխարը գլուխը թեքում է դեպի կողքը և սկսում պտուլտ պտուլտ գալ. յերբեմն ել գլուխը դեպի մեջքը ծռած առանց ուշադրություն դարձնելու աչքան է վազում, մինչև փոր հոգնածությունից թուլանում, ընկնում է:

Հիվանդությունն առաջանում է քեափանագի մի ալլախակից, փորն արյան մեջ մտնելով, տարածվում է մարմնի մեջ և աչնտեղից անցնում ուղեղը և ուրիշ կերպարանք ստանում, աչն է՝ հեղուկով լիքը փուչիկների մեջը: Այդ հեղուկի մեջ լինում են ապագա քյափանակի սպիտակ սաղմեր: Այդ փուչիկը կարող է հավի ձևի մեծության հասնել, կարող է ուղեղի մեջ մի քանի հատ լինել: Ուղեղի մեջ տեղավորվելուց հետոհետե մեծանում է, սկսում ներգործել փոշ միաչն ուղեղը սեղմելով, ալլ և թունավորել. դրանից վոչխարը տխրում է, կասես քնած լինի կամ կուրացած, կորցնում է ախորժակը, առաջին կամ յետեվի վտանքներ հանկարծ կուսնում է, աչդ գրությամբ ժամերով մնում: Պտուլտ-պտուլտ գալը պատահում է հիվանդության վերջին, աչն ել փոշ միշտ: Պատում է աչնպես, ինչպես կատուն, փոր խաղում է իր պոչի հետ:

Հիվանդությունը նալելով ուղեղի մեջ լեղած փուչիկների շատ լինելուն տեվում է 3-4 շաբաթ, քիչ լինելուց՝ ամիսներ:

Այդ հիվանդությունից դժվար է վոչխարներին բուժել, սովորաբար թողնում են մինչև փոր մահանում և և ձգում են շների առաջ ուտելու: Այդպես վարվելը մեծ չարիք է. շները միտն ուտելով նրանց հետ ներս են ընդունում քյափանակի սերմերը, փոր զարգանալով մեծանում, յերկարանում են: Քյափանակով վարակված շունն իր աղբի հետ ցանում է նրա ձվաները, իսկ վոչխարները խոտ ուտելուց վարակվում են, աչնպես փոր վոչխարը վարակվում է շներից, իսկ շները վոչխարներից, բաց գրանք աչնպես չեն վարակվում, ինչպես վոչխարները:

Բժեկությունը: Առաջն առնելու համար աչդ ցավով վարակված և սատկած վոչխարի գլուխը պետք է կտրել, տյրել կամ յեփել առանց շներին տալու: Ամերիկայում պարզեվադրում է տերությունը նրան, ով ուղեղի փուչիկներ է բերում և պարտավորեցնում որենքով վոչխարատերերին տարին յերեք անգամ պահապան շներին քյափանագի ճար տալ, փոր նրանք չվարակեն վոչխարներին:

10. Փորի ուռչելը.—Առաջանում է մեծ քանակությամբ յերեքնուկ, վիկա և որիշ սննդարար կանաչ կերից, ցուրտ տարած ու թթված խոտերից, կարտոֆելի տերեվից, ճակընդեղից և թունավոր բույսերից. պատահում է նուլնպես և չոր կերից անմիջապես կանաչ կերի ձգելուց:

Փորի ուռուցը լինում է մարմնի ձախ կողմում. վոչխարը դադարում է ուտելուց, մեջքը դուզ արած աշխատում է կտտել, բաց չի կարողանում, շնչառությունն արագանում է, լավ չի ման գալիս և մի քանի օրից մահանում է:

Բժեկելը.—Փորուռուցը նկատելուց պետք է փորը ճրմուկ և ցուրտ ջուր ածել վրան: Խմելու տալիս են կրա-



ջուր կամ կամփորնի սպիրտ, ողի և նաշադիրի սպիրտ: Այդ միջոցները չողնելուց տրոկար ասված գործիքով ծակում են և փորի միջից քամին հանում: Այդ գործողությունը պետք է անասնաբուժի կամ նրա ոգնականի միջոցով լինի:

Յեթե վերոհիշյալ միջոցները գործադրելուց վոչխարի փորուռուցը քաշվում է, պետք է թեթե և չափավոր կեր ուտեցնել:

11. Բրդի ուտելը կամ կրծելը. — Այս հիվանդությունը պատահում է կերի վատ հատկությունից, մարսողության խանգարվելուց, մեծ քանակությամբ կարտոֆելով և նրա կանաչ տերևներով կերակրվելուց:

Գառներն սկսում են կրծոտել իրենց մալերի բուրդը 1 և կես կամ 2 ամսականում: Գառը բուրդն ուտելուց փորկապություն է առաջանում, մարսողությունը խանգարվում, փորից և լղարում են և շատ անգամ աղիքների բորբոքումից մահանում: Բժշկելու ամենակտրուկ միջոցը կերի փոխելն է և չոր ու մաքուր խոտով կերակրելը: Փորձերը ցույց են տվել, փոր վատ կեր ուտեցնելուց վոչխարներն սկսել են միմիանց բուրդը կրծել, բայց հենց փոր կերը փոխել, լավացրել են, դադարել են կրծելուց:

Անգլիացի Սաիլը խորհուրդ է տեսնում կերի հետ մի քիչ կավիճի փոշի և աղ խառնել, ուտեցնել, չերկու շաբաթվա ընթացքում հիվանդներն առողջանում են:

12. Ջրգողություն (водянка) առաջանում է խոնավ, ցածառեղ արոտատեղերում արածեցնելուց, փչացած կարտոֆել ուտելուց և վատ խնամքից: Անձրեային տարիներին աչդ հիվանդությունն ավելի է պատահում: Հիվանդ անասունը լղարում է, թուլանում, կաշին սպրտնում է, բուրդը չորանում և տեղ-տեղ թափվում: Հիվանդությունը զարգանալով կաշու տակն ավելի հաճախ վզի ներքևի մասում, կրծքի և փորի վրա ուռուցներ են առաջանում:

Այս հիվանդության առաջը կարելի է առնել լավ կեր ուտեցնելով և հիվանդներին զարու ալյուր և աղ տալով:

13. Սեռական անդամի բորբոքումը. — Վորձ վոչխարների, ինչպես և աչձերի սեռական անդամի ներքևի մասը շատ անգամ ուռչում, կարմիր գույն է ստանում, գնալով ցածից դեպի վեր գնում: Կաշու արանքում մեղր հավաքվում է և հետո թարախակալում, վերջը սեռական անդամի ներսն աչնպես է նեղանում, փոր դժվարանում է միգել: Այնուհետև սկսում է փորն ուռչել, դողացնել և չեթե ոգնություն չեն հասնում, մահանում է:

Բժեկուրյունը. — Այս հիվանդության առաջը կարելի է առնել, թեթե շիբաջուր շինել և վազելինի հետ խառնած բսել և վորձի և եգի սեռական անդամները ջրով լվանալ:

Ոգնում է և կամ արոտատեղերում տարվա չոր չեղանակին արածացնելը:

14. Արյունոտ մեղր. — Այս հիվանդությունն առաջ է գալիս չերկարատե չորություն ժամանակ չորաքցաթ տեղերում արածացնելուց, ճահճային տեղերում արածացնելուց, թալ (лебеда) բույսը ուտելուց: Հիվանդ վոչխարների տաքությունը բարձրանում է 41 աստիճանի, ստանում են փորլուծություն, ախորժակները կապվում է և հիվանդանալուց 12 ժամ անց, մեղր գորշ կարմիր կամ մուգ կարմիր գույն է ստանում:

Ծանր հիվանդ ժամանակը գլուխը, կուրծքը և վիզը ուռչում է, ուժից ընկնում: Հիվանդությունը տևում է չերկու շաբաթ, հարյուրից 40-ը մահանում է:

Դրա առաջը կարելի է առնել վատ խոտատեղերից հեռացնելով և լավ չոր կամ կանաչ խոտ ուտացնելով:

15. Վոչխարի հաբուխ ընկնելը. — Այս հիվանդությունն առաջանում է մրսելուց և թե փոշի կուլ տալուց: Հիվանդությունը լինում է թեթե և ծանր. վերջինս ավելի վտանգավոր է, չերը սկսում է վոչխարի փորկուրը, աչքերը, շնչափողը թարախակալել (վահրով լցվել): Գթի հար-



բուխի հետ միաժամանակ առաջ է գալիս կապույթուն կամ փորլուծութուն։ Հիվանդ վոչխարները տաքացնում են, ջերմում, կերի չեն մոտենում և սաստիկ նիհարած, թուլացած ընկնում։

Հիվանդներին պետք է առանձնացնել, լավ կերակրել և մաքուր սգում պահել։

16. Վոչխարի բլի ուռչելը. — Այս հիվանդութունը պատահում է սաստիկ մրսելուց, չերբ չեղանակը համկարծ փոխվում է և թե շատ ցուրտ ջուր խմելուց։ Հիվանդ վոչխարը տաքանում է, աչքերը կարմրում, սաստիկ ծարավ զգում, ախորժակը կապվում, ախուր կերպարանք ստանում, դուխը կախում, ձաշնը խաղտա դառնում, քթածուկերը լայնանում և վիզն ուռչում։

Նա չի կարողանում կուլ տալ, մինչև անգամ քթից է թափվում, շնչառութունը դժվարանում և խեղդվում։

Բժկությունը. — Վոչխարը կերը դժվար կուլ տալու դեպքում բերանը սրսկում են մեղրի և ջրի հետ խառնած քացախ։ Վզի ուռած տեղի բուրդը խուզում են և 3 մսխալ նաշատիրի սպիրտ և 7 մսխալ ձեթի և կամփորնի սպիրտի հետ խառնած քսում։ Խմելու համար տալիս են գոլ ջուր, ալյուր և քիչ թթու քացախ հետը խառնած։

17. Կուրծի բորբոսումը. — Այս հիվանդութունը հաճախ պատահում է ծնելուց 6—8 շաբաթ հետո և ավելի տանջվում են շատ կաթ տվողները։

Յուրա և խոնավ չեղանակը, գառների գլխով խփելը մոր կրծին կամ ծծերին բորբոքում են առաջացնում, բացի այդ կարող են եղբոր վարակվել և նրանց կուրծի մեջ ընկած առանձին անկալին պարագիտից։ Կուրծի վտանգված մասն ուռչում է և սև գույն ստանում։ Շատ անգամ պատահում է, փոր դրանից կուրծի մի մասն ընկնում է և վոչխարը մահանում։

Հիվանդ մայրերին հեշտ է խմանալ արոտատեղերում, նրանք հոտից կտրվում են, չեն են միում, չեն արածում,

ախրում են, գլխները քաշ, ականջները կախ, մեջքը ծռած և վտանները չռած դժվարութունով են շարժվում։ Յեթե գառները ծծում են, մայրերը ցավից ընկնում են և առանց սգնության չեն կարողանում բարձրանալ։

Թեթե կերպով կուրծը բորբոքվելուց նրա մեծ մասը կարմրում է, տաքանում, ուռչում, պնդանում և բշտիկներով ծածկվում, դեղին խուցեր առաջ բերում, հուփ տալուց ծծերից շիճուկ է դուրս ձգում։ Կուրծի չերկու մասերը հիվանդ լինելուց ուռուցներ են առաջանում փորի և ազդրների վրա։ Մուգ կապույտ կամ սև կուրծը և փորի տակն ուռչելը ճիշտ նշաններ են անասունի շատ մահանալուն։

Բժկությունը. — Կուրծը բժշկելու համար, չեթե հիվանդութունը թեթե է, շուտ շուտ քսում են քացախի հետ խառնած կալ։ Սաստիկ բորբոքման ժամանակ կտավատի սերմը քիչ տաքացրած դնում են վրան կամ քիչ թանձր մոխրաջրով շուտ շուտ լվանում։ Ոգնում է և կանաչ սապոն քսելը սպիտակ լուղի հետ։ Յեթե կուրծը թարախալալ է (վահրով լցվել), դանակով բանում են, հուփ տալով թարախը հանում և չերեցուկի (լուի ծաղիկ) խաշուով կամ կարբոլան թթվումով լվանում (մի շիշ ջրին մի հացի դդալ կարբոլան թթու վերցրած)։

18. Տիգեր. — Ամառ ձմեռ տիգերը կարող են վոչխարներին կալած մնալ. դրանք լինում են գլխավորապես աչն վոչխարների վրա, փորոնք արածում են անտառային աղքատ արոտատեղերում կամ ճախնային տեղերից հնձած խոտով կերակրվում։ Կերի բշտութունը և կաշվի ու բրդի խոտով կերակրվում։ Կերի բշտութունը, տիգերի համար բուն դնելու համար տեղ են ստեղծում վոչխարների մարմնի վրա. աչնինչ լավ կերը ու ճարպալն քրտինք դուրս տալը նրանց փչացնում են. տիգերն ավելի հիվանդ և թույլ վոչխարների վրա չեն թափվում, քան առողջների։

Բուրդը խուզելուց տիգերն անցնում են գառների



վրա, վորոնք շուտով լցարում են և վատ բուրդ տալիս: Տիգերի սիրած տեղը, վորանդ և նրանք դնում են իրենց ձվաները, վոչխարի վիզն է: Նրանք ծակում են կաշին, ծծում արյունը և նեղացնում, գրգռում վոչխարներին, վորից նրանք քորելու համար սկսում են պատահած քարի, փայտի քսքսվել, բուրդը կեղտոտել:

Բժեկությունը.— Տիգերի առաջն առնելու համար առաջարկում են թամբաբուր ջրով լվանալ մարմինը կամ կրեզոլին ասված ճար քսել, մի մաս կրեզոլինին 3 մաս ջուր խառնած: Գոմը պետք է մաքուր պահել ու աղբը հեռացնել:

19. Բուռերի (շանաճանճերի), վորդերի պահեստում հիվանդությունը.— Վոչխարները բուռերի վորդերից հիվանդանում են անտառների մոտ չեղած արոտներում արածելուց: Բուռերի եզերը բազմանում են ամառվա կեսին և վերջին ու իրանց ձվաները դնում վոչխարների քթածակերում: Այդ ձվաներից դուրս չեկած վորդերը հետզհետե մանում են ավելի խորը գազաթի, քթի, ճակատի մեջ և մոտ չորս ամիս մնում: Դրանք մի քանի տամնչակ լինելով գրգռում են, վորից քթի մազասալին մասերն ուռչում են, բորբոքվում, ուղեղի և աչքերի բորբոքում առաջ բերում: Հիվանդ վոչխարների քթից մազաս և թափվում, ման գալուց որորվում են և գլխները ցած պահում:

Բժեկությունը.— Ամենահարմար ճարն ալդ տիգերի դեմ ձլոթն է (մազութ) վրան աղ շաղ տված, վորը լիզելուց կպչում է դնչին ու բուռերը նրա հոտից չեն մոտենում:



ՀՀ Ազգային գրադարան



NL0297088



# Ի. Լ. ՂԱՐԱԲԱՂԻ ՊԵՏՅՐԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ

## ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Ի՞նչպե՞ս անել, ժուր կովը շատ կաթ տա—Թարգմ.  
Ս. Բարսե—1925 թ., գինը 10 կոպ
2. Ի՞նչ է կենդանիների վարակիչ հիվանդությունը և ի՞նչ  
պե՞ս պետք է կովել նրա դեմ—Թարգմ. Նառնյան—  
1925 թ., գինը 12 կոպ
3. Այծը—Կ. Կ. Մելիք-Շահնազարյանի—1925 թ., գինը  
12 կոպեկ
4. Յերբ և ի՞նչպե՞ս վարել արտատեղը—1926 թ., գինը  
8 կոպեկ
5. Վոչխարապահություն—Կ. Կ. Մելիք-Շահնազարյանի—  
1926 թ., գինը 12 կոպ
6. Նոր Ուղի, ա տարի—Գ. Եղիլյանի 1925 թ., գինը  
60 կոպեկ
7. Նոր Ուղի, բ. տարի—1925 թ., գինը 75 կոպ.

## ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՄՆԵՆ

1. Խոզապահություն—Կ. Կ. Մելիք-Շահնազարյանի
2. Կարտոֆիլի մշակություն " " "
3. Սպառնդական կոտակերացիան դյուզում— Գ. Ալթունյան
4. Գյուղատնտ. արտադրական կոտակերացիան — " "
5. Տնայնագործություն և Ղարաբաղում— Գ. Սեյրան